ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N844-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 17-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի N1656-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N844-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N1656-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N844 -Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի «Հողի և ունեցվածքի գործառնություններ», «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն», «Երթաշարժ» փակ բաժնետիրական ընկերությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները, դրանց կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N1656-Ա որոշման N2 հավելվածի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի 2011 թվականին նախատեսված ծրագրերի իրականացման հետ կապված կատարվում են փոփոխություններ:

Ընկերության կառուցվածքից կրճատվել են <<Պայմանագրերի մշակման և համարակալման>>, <<Շենքերի և շինությունների համարակալման և հաշվառման>>, <<Պետական սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման, հողօգտագործման և օտարման պայմանագրերի մշակման, հաշվառման և վերահսկման>> և <<Անշարժ գույքի ընթացիկ հաշվառման և վերլուծության>> բաժինները և ավելացել են <<Անշարժ գույքի տեխնիկական գույքագրման, պայմանագրերի նախապատրաստման, մշակման և հաշվառման>>, <<Անշարժ գույքի համարակալման, հաշվառման և վերլուծության>> և <<Անշարժ գույքի գնահատման և ռիելթորական գործունեության>> բաժինները:

Կառուցվածքի փոփոխության հետ կապված փոփոխվել է նաև ընկերության հաստիքացուցակը: Ընդհանուր առմամբ աշխատողների թվաքանակը կազմում է 67 միավոր, որից 13-ը տնօրինություն, երեք բաժինները միասին՝ 26 և պայմանագրային 28 միավոր: Ամսական աշխատավարձի ֆոնդը ավելացել է 888.8 հազար դրամով, որի մեջ 62.4 հազար դրամը որպես հավելավճար, կապված <<Անշարժ գույքի տեխնիկական գույքագրման, պայմանագրերի նախապատրաստման, հաշվառման ու մշակման>> բաժնի գլխավոր մասնագետի վրա լրացուցիչ պարտականություններ դնելու հետ:

Հաստիքացուցակի հիմնական աշխատողների մասով ավելացել է 4 միավոր 916.6 հազար դրամ աշխատավարձի ֆոնդով, պայմանագրային /ժամկետային/ աշխատողների մասով կրճատվել է 4 միավոր, 27.8 հազար դրամ աշխատավարձի ֆոնդով:

Ամսական աշխատավարձի դրույքաչափերը 2010թ. հաստատված դրույքաչափերի նկատմամբ աճել են 10 տոկոսով:

Ելնելով նշվածից՝ առաջարկվում է համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 17-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի N1656-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N844-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N844-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 17-ի N844-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N844-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 17-ի N844-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ